ԳՐԱԿԱՆ

ՏՐՅ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ
Գ. Ընծայարանի շրջանաւարտ

ԱՌԱՔԵԼ ՍԻՒՆԵՑԻՆ ԵՒ ՆՐԱ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Բանալի բառեր. *Առաքել Սիւնեցի, Ադամգիրք, բանաստեղծ, մանկավարժ, տաղեր։*

Key words: *Arakel Syunetsi, poet, pedagogue, verses.*

XV դարի սկզբի նշանաւոր փիլիսոփայ, բանաստեղծ, մանկավարժ, մատենագիր, հոգեւոր և հասարակական գործիչ Առաքել Սիւնեցին Տաթեւի դպրոցի վերջին մեծ ներկայացուցիչն է։ Աշակերտել է XIV դարի մեծ մտածողներ՝ Յովհան Որոտնեցուն և Գրիգոր Տաթեւացուն։ Եղել է վերջինիս քրոջ որդին և Սիւնիքի արքեպիսկոպոսը։

«Զմեծ վարդապետն իմ դասասաց,
Գրիգոր անուն պատճառ բարեաց,
Յիշէ յաղօթս ձեր առ աստուած...
Զիմ մեծ բաբունապետն յոյժ իմաստասէր
ԶԳրիգոր մեծ ճգնազգեաց աղերսէք առ տէր...
Զմեծ վարդապետն իմ հանճարեղ...» [1]***։***

Թէեւ Սիւնեցու վաստակն անգնահատելի է հայ մշակոյթի պատմութեան մէջ թէ՛ բանաստեղծական արուեստի, թէ՛ գիտութեան և արուեստի բնագաւառներում, սակայն, պէտք է նշել, որ գիտական և յատկապէս գեղարուեստական բազմաբովանդակ ժառանգութիւն թողած այս հեղինակի մասին կենսագրական տեղեկութիւններ մեզ գրեթէ չեն հասել։

Ենթադրւում է, որ նա ծնուել է XIV դարի յիսունական թուականներին և մահացել մօտ 1425 թուականին։ Սակայն, ինչպէս Առաքել Սիւնեցու «Ադամգրքի» *քննական բնագիրը կազմած և հրապարակած Ա. Մադոյեանն է նշում, Առաքել Սիւնեցու՝ աշխարհով մէկ սփռուած ձեռագրերի նիւթը դեռեւս ամբողջութեամբ չի դրուել շրջանառութեան մէջ, և նրա թողած մեծ ժառանգութիւնը պէտք է հանգամանօրէն ուսումնասիրել*[2]*։ Նման ուսումնասիրութիւնները բնականաբար կը նպաստեն Առաքել Սիւնեցու կենսագրական փաստերի բացայայտմանը։*

Լինելով «Սիւնեաց վերադիտող»*, այսինքն գլխաւոր տեսուչ, առաջնորդ, եպիսկոպոսապետ՝ Առաքել Սիւնեցին երկար տարիներ դասաւանդել է Տաթեւի բարձրագոյն դպրոցում (համալսարանում)։ Ժամանակակիցները արտակարգ գովեստով են խօսում Սիւնեցու մասին իբրեւ բանաստեղծի, իմաստասէր և առաքինի անձնաւորութեան։ Տաթեւի դպրոցի նրա դասընկերը՝ Թովմա Մեծոփեցին, նրա մասին գրում է. «**...մեծ իմաստասէր, քուերորդին մեծ վարժապետին, որ ունէր զմիտքն իբրեւ զիրեղինաց. և էր***

[1] **Առաքէլ Սիւնեցի,** Ադամգիրք, հրատարակեց Մ. Պոտուրեան, Վենետիկ, 1907, էջ 229, 271, 332 (յիշատակարանների մէջ), տե՛ս նաեւ **Մ. Աբեղեան,** Երկեր, հտ. Դ., Երեւան, 1970, էջ 421։

[2] Տե՛ս **Առաքել Սիւնեցի,** Ադամգիրք, աշխ.՝ Ա. Մադոյեանի, Երեւան, 1989, էջ 3-4։

սիրող ամենայն առաքինութեանց»[3]:

Գրիգոր Տաթեւացին էլ 1407 թուականին իր Գիրք քարոզութեան՝ Ամարան հատորի յիշատակարանում գովեստով է խօսում Սիւնեցու մասին.

«Նախ քեռորդւոյն իմոյ ըստ մարմնի,
Ծրնրնդամիտ երգաբանի,
Առաքելոյ առաքինի,
Եւ Սիւնական գլխոյ արիի»[4]:

Վերջին տողից էլ իմանում ենք, որ Սիւնեցին եղել է Սիւնիքի «արիին», *որ նշանակում է գլխաւոր առաջին եպիսկոպոս, արքեպիսկոպոս ու առաջնորդ:*

Առաքել Սիւնեցուց մեզ են հասել չափածոյ բանաստեղծութիւններ, ինչպէս նաեւ «Մեկնութիւն կամ համառօտ լուծմունք սահմանաց՝ գրոց Դաւիթ Անյաղթի», «Մեկնութիւն քերականութեան» *աշխատութիւնները[5]: Հայ գրականութեան մէջ Սիւնեցին իր ուրոյն տեղն է գրաւում քնարական և խրատական քերթուածներով, պոեմներով ու ներբողեաններով: Նշանաւոր են նրա* «Դրախտգիրքն»[6] *ու* «Ադամգիրքը»[7], *որոնց մէջ Սիւնեցու մտահոգութիւնը մարդու ճակատագիրն է, նրա լինելութեան խնդիրը. հարց, որն այդ դարաշրջանում քննարկուող խնդիրների մէջ ամենակարեւորն էր՝ կապուած մարդու կեցութեան ու նրա կատարելագործման հետ: Հեղինակը աստուածաշնչեան և կրօնական թեմաների միջոցով անդրադարձել է իր ժամանակի բարոյական և հասարակական երեւոյթներին:*

Առաքել Սիւնեցու չափածոյ միւս երկերի շարքում հոգեւոր ու բարոյական բնոյթ կրող տաղերի մէջ թաքնուած են նաեւ սիրային բազմաթիւ հատուածներ: Այդպիսիներից է օրինակ. «Տարփմամբ սիրոյ քեզ տագնապիմ» *տաղը, որը հիանալի սիրերգ է, նմանապէս՝* «Ահա բաղնամ քեզ ցանկալի», «Ահա մեծ լեառն և ահագին» *սկզբնաւորութեամբ տաղերը:*

Քաղուածաբար՝ սիրային հատուածներից 19-ը քառեակներ, 1910 թուականին Մ. Կուզմինի թարգմանութեամբ հրատարակուել են ռուսերէն՝ «Молитва» *(Աղօթք) խորագրով:*

Քննադատներից ոմանք նկատի ունենալով նրա տաղերի թեթեւ ոճը, նկարագրական ճոխութիւնը, յատկապէս Աստուածածնի կերպարը կերտելիս («Գովք Աստուածածնի»*), Սիւնեցուն համարել են աշխարհիկ սիրոյ և հոգեբանութեան երգիչ՝ նմանութիւններ գտնելով հայրէնների ու նրա քնարերգութեան միջեւ: Սակայն, կարծում ենք, Սիւնեցու տաղերի աշխարհիկ ձեւը չի բխում նրա աշխարհիկ զգացումներից: Նա խոր և համոզուած կրօնաւոր է, որը փորձում է միայն նորացնել և թարմացնել հին եկեղեցական ճնշող ոճը և իր կրօնական գաղափարները դարձնել աւելի մատչելի: Նրա նպատակը ոչ թէ սիրոյ ու գեղեցկութեան գովերգն է, այլ մարած և մարող բարեպաշտութեան, հոգեւոր զգացումների կենդանացումը, որի պակասը այնքան զգալի էր XV դարում: Հայոց եկեղեցին ու Հայոց դաւանանքը սրբութիւններ էին նրա համար:*

Որոշ ստեղծագործութիւնների հեղինակային պատկանելիութիւնը յաճախ շփոթել են, վերագրելով դրանք կամ Առաքել Սիւնեցուն և կամ Առաքել Բաղիշեցուն: Ինչպէս օրինակ Առաքել Բաղիշեցու գործերից «Աստուածածին կոյս պատուական»

---

[3] Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, արարեալ Թովմա վարդապետին Մեծոբեցւոյ, Փարիզ, 1860, էջ 51:

[4] **Գ. Տաթեւացի,** Գիրք Քարոզութեան, Ամարան հատոր, Երուսաղէմ, 1998, էջ 721:

[5] Ա. Սիւնեցու գործերի գնահատման և հրատարակութեան գործում մեծ դեր են կատարել Վենետիկի Մխիթարեանները:

[6] Հրատարակուել է Վենետիկում՝ 1956 թուականին, բանասէր Ն. Տէր-Ներսիսեանի ջանկերով:

[7] Հրատարակուել է երեք անգամ. Կ. Պոլսում՝ 1721, 1799 թուականներին և Վենետիկում՝ 1907-ին:

տաղը ձեռագրերում պատահում է նաեւ Առաքել Սիւնեցու անունով։

Ուսումնասիրողների մօտ աւելի մեծ է եղել շփոթութիւնը միայն «Առաքել» *անունով յայտնի բազմաթիւ բնագրերի հեղինակային պատկանելիութեան խնդրում։ Մեծ մասամբ, ըստ երեւոյթին, Սիւնեցու գործերը ընծայուել են Բաղիշեցուն*[8]*։ Այս շփոթութիւնը Զամչեանից անցել է Զարպհանալեանին, նրանից Ղ. Ալիշանին և Յ. Տաշեանին։ Մ. Պոտուրեանը շփոթուած տաղերի մի մասը ոճական ու տաղաչափական առանձնայատկութիւնների հիմնաւորմամբ վերագրում է Առաքել Սիւնեցուն։ Սակայն, ըստ Մ. Աբեղեանի հաւանաբար կամ ստուգապէս դրանցից Առաքել Սիւնեցունն են մօտ յիսուն տաղ և մի մեծ աստղաբաշխական քերթուած* «Վասն երկոտասան կենդանակերպիցն... ասացեալ ի յԱռաքել վարդապետէ», *որի մէջ կայ նաեւ այս տողը.* «Տէր Առաքել գրեցի զայս բան»[9]*։*

Առաքել Սիւնեցու «Ադամգիրք»*-ը, տաղերը, ինչպէս նաեւ արձակ գրուածքները իբրեւ ներշնչման աղբիւր ունեցել են աստուածաշնչական, խրատական նիւթերը։ Բացառութիւն են կազմում մի քանի կարճ տաղեր, որոնք արծարծում են աստղագիտական աւանդութիւններ։ Իր գործերում նկատւում են տարրերի բազմազանութիւն, բարդութիւն, այլազանութիւն, որտեղ իրար են խառնւում աստուածաբանը, քարոզիչը, բարոյախօսը, քնարերգակը, դիւցազներգակը, աղօթողն ու աշուղը։ Ա. Զօպանեանի բնորոշմամբ* «լեզուն ստորին գրաբարի և աշուղերէնի խառնուրդ մըն է»[10]*։ Նրա կարծիքով Առաքել Սիւնեցու տաղերի ստուար մասը ձանձրալի ու տափակ խրատաբանութեամբ են տոգորուած։ Ըստ նրա,* «Ադամգրքի» *երեք քառորդը անընթեռնելի է, թէպէտ այդ ամենաձանձրալի կտորների մէջ էլ՝ տեղ-տեղ պատահում են ուժեղ տողեր և հատուածներ։ Թերութիւններ է համարել՝ երկարաբանութիւնները, կրկնութիւնները, ոչ ճիշդ բացատրութիւններն ու տգեղ կազմուած դարձուածքները։ Այդ բոլորի պատճառը այբբենական տաղաչափութիւնն է, որը Սիւնեցին յաճախ է գործածել։ Շատ յաճախ ստիպուած է եղել այբուբենի բոլոր տառերով սկսող տուներ շարելու համար դիմել կրկնութիւնների և աւելորդաբանութիւնների։ Սակայն սա, այդ թերութիւնը բացատրող պատճառներից մէկն է միայն, գլխաւորը՝ ճաշակի պակասն է, գրական նուրբ կրթութեան բացակայութիւնը, որը դրսեւորել է նաեւ պարզ տաղաչափութեամբ գրուած տաղերում։*

Այս «թերի» կողմերին անդրադառնալուց յետոյ Ա. Զօպանեանը Սիւնեցու գրութիւններից վեց-եօթ տաղ և «Ադամգրքի» *մէկ երրորդ մասը բաւական է համարել նրան հին գրականութեան մէջ փայլուն ու առանձնայատուկ տեղ տալու համար։ Տաղերից ամենագեղեցիկներից են՝* «Ո՛ բաղձալիւն Յիսուս» *միստիկական սիրերգը, որը Մ. Պոտուրեանը 1906 թուականին հրատարակեց Բազմավէպում, երկու* «Ներբող Աստուածածնայ», *ու* «Վասն փառաց սրբոցն» *տիտղոսով մի քերթուած*[11]*։* «Ո՛ բաղձալիւն Յիսուս» *տաղը, չափազանց երկար է, զմայլելի տներ է պարունակում, ուր բանաստեղծը՝ ներշնչուելով* «Երգ Երգոց»*-ից, ինքնատիպ կերպով գեղեցիկ պատկերներ է կերտել.*

«... Դու ի վերայ ծաղկեալ լերանց
Անուշահոտ խնկաբերաց՝
Ճառագայթես լուսով փառաց.
Ձիւնատեսիլ սպիտակացան:
... Թէ տեսութեան քում հանդիպիմ.,
Որպէս շուշան լուսով ծաղկիմ.

---

[8] Ադամգրքի հրատարակողները 1721 թուականին, գրքի տիտղոսաթերթի վրայ գրել են. «Արարեալ տէր Առաքել վարդապետի Բաղիշեցւոյ և Սիւնեաց եպիսկոպոսի»:

[9] **Մ. Աբեղեան,** Երկեր, հտ. Դ., Երեւան, 1970, էջ 422:

[10] **Ա. Զօպանեան,** Ա. Սիւնեցիի Ադամգիրքը, հրատարակութիւն Մ. Պոտուրեանի.- Ա. Ղազիկեանի թարգմանութիւնները, «Անահիտ» հանդէս ամսեայ, Ժ. տարի, 1908, թիւ 1-2-3-4, էջ 2:

[11] «Բազմավէպ», Նախնեաց քերթուածք, Առաքել Սիւնեցի Վենետիկ, 1913, մարտ, էջ 140-141:

Եւ որպէս հոր սիրով վառիմ,
Փափաքելով քեզ նըւաղիմ:
... Կաթն ու խորիսխ ի քոյթ շրրթանց
Բըղխեալ բաշխեն պաքեալ անձանց.
Դու ճառագայթ արեգականց,
Զիս արասցես լուսաթափանց:
Յօղ արտասուացս իմ սաստկագին
Համայն զերկիր հեղեղեցին.
Յոյց ինձ ըզդէմըս քո կըրկին
Ահեղակերպ եւ լուսածին»[12]:

Սիւնեցու տաղերից համեմատաբար ամենակատարեալը «Վասն փառաց սրբոց» *քերթուածն է, որտեղ նա ապացուցել է, որ կարող է այնքան թարմ ու պայծառ գոյներով նկարագրել սուրբերի երանութիւնը, որքան որ մռայլ ու զարհուրելի գոյներ էր ստեղծել՝ մեղաւորների անձկութիւնը, սարսափը կամ յաւիտենական տանջանքների զարհուրանքը պատկերացնելու համար: Այդ տաղը եթէ չունենար մի քանի թոյլ տողեր և կրկնաբան աւելորդ տներ, իր տեսակի մէջ հրաշակերտ պիտի համարուեր:*

Աւելի ծաւալուն գործ է «Ադամգիրք» *պոեմը, որն ունեցել է մի քանի տարբերակներ: Ա. Զօպանանեանն այն կոչել է* «վիպաքերթուածք»[13]*: Պոեմը բաղկացած է 1740 տող պարունակող տաս գլուխներից և արտայայտում է կորուսեալ դրախտի գաղափարը՝ նման Ջ. Միլտոնի հանրայայտ գործին, բայց գրուած նրանից աւելի քան 250 տարի առաջ: Նիւթը վերցուած է Աստուածաշնչից և վերաբերում է Ադամի և Եւայի ճակատագրական մեղքի պատմութեանը: Հեղինակը կորցրած դրախտի ողբերգութեան աստուածաշնչական զրոյցը հարստացրել է բանահիւսական մոթիւներով, միջադէպերով ու պարականոն գրուածքներով:*

Պոեմի գաղափարը նոյն բարոյագիտական կոչն է, առաքինի ապրելու պահանջը, որ Սիւնեցին իրագործում է գեղարուեստական հմուտ լուծումով:

Իր քերթողական հմայքը, մարդու անկման պատմութեան թելադրիչ ու ճոխ նիւթից հրապուրուած, փորձել է արտայայտել իր ողջ կարողութեամբ: Առաքել Սիւնեցին հետեւողականօրէն փորձել է կատարելութեան հասցնել իր ստեղծագործութիւնը և ամէն անգամ դժգոհ մնալով երեւան եկած արդիւնքից, սկսել է նորը գրել՝ նոր ձեւով: Հ. Պոտուրեանը հրատարակել է «Ադամգրքի» *երեք տարբերակն էլ, որոնցից առաջին երկուսը աւելի համառօտ են քան վերջինը: Որեւէ տուն չկայ, որ Սիւնեցին վերցրած լինի նախորդ երկու* «Ադամգրքերից», *որովհետեւ վերջին* «Ադամգիրք»*-ը նախորդների սրբագրելով չի ստեղծել, այլ գրել է նորը:*

Ըստ Ա. Մաղոյեանի՝ յիշեալ երեք տարբերակներից լաւագոյնը վերջին «Ադամգիրք»*-ն է, որով Առաքել Սիւնեցին ընդլայնել է միջնադարեան հայ գրականութեան ժանրային տեսակների և յարաբերութիւնների շրջանակները: Հեղինակն այս գործում կնոջն ու սէրը պատկերել է մի նոր տեսանկիւնից՝ յաղթահարելով աւանդական կաղապարները: Նրա կերտած Եւան կնոջ ներաշխարհի համակողմանի ընկալման իւրայատուկ փորձ է[14]:* «Ադամգիրք»*-ը Առաքել Սիւնեցու գեղարուեստական մտքի բարձրակէտն է, ձեւի ու բովանդակութեան ներդաշնակ միաձուլման գեղեցկագոյն երկ:*

Ուրախութեան ու բերկրանքի շողերի մէջ կորած դրախտի նկարագիրը կատարեալ մի պատկեր է, որի ճոխութեան մէջ հրճւում է առաջին մարդը.

---

[12] «Անահիտ» հանդէս ամսեայ, Ժ տարի, 1908, թիւ 1-2-3-4, էջ 2:

[13] **Ա. Զօպեանեան,** Ա. Սիւնեցիի Ադամգիրքը, հրատարակութիւն Հ. Պոտուրեանի.- Հ. Արսէն Ղազիկեանի թարգմանութիւնները, «Անահիտ» հանդէս ամսեայ, Ժ. տարի, 1908, թիւ 1-2-3-4, էջ 3:

[14] Տե՛ս **Առաքել Սիւնեցի,** Ադամգիրք, աշխ.՝ Ա. Մաղոյեանի, Երեւան, 1989, էջ 8:

«Էր փառք դրախտին անպատմելի,
Զբքնաղագեղ եւ սրխրալի.
Ծաղկունքքն տայր փայլքս փայլի՝
Արեգական նման եւ լուսնի:

Դէմքն Ադամայ փառօք ծաղկեալ՝
Եւ որպէս լոյս ճառագայթեալ.
Յոլմունք լուսոյ անտի հոսեալ
Եւ որպէս հոր փայլատակեալ:

Դէմքն իւր ծաղկեալ էր զանազան,
Որպէս ըզլոյս արեգական.
Բուրէր եւ հոտ անմահութեան
Բերկրեալ խայտայր ինքն ընդ ինքեան:

Ադամ ծաղիկ էր նորածին,
Լուսաբողբոջ գարնանային.
Փրթթեալ փառօք ի մէջ դրախտին՝
Ծափքս ծափի տայր ի սրրտին:

Զինչ հայելի պայծառ փայլէր.
Աստուած ի նմա միշտ երեւէր.
Եւ ճառագայթ լուսոյն հոսէր,
Զանձամբ իւրով փայլատակէր»[15]*:*

Բայց չարը խափանում է Ադամի դրախտային երջանկութիւնը. Եւան խաբուել է սատանայից և ճաշակել արգելուած պտուղը։ Կինը դառնաղի ողբում է և փորձում համոզել Ադամին կատարելու ճակատագրական նոյն սխալը, որի պատճառով նրանք արտաքսւում են դրախտից, մտքով վերապրում նախկին երանելի վիճակը, զղջում կատարուածի համար և մխիթարւում արքայութիւնը վերագտնելու ապագայ յոյսով։

Առաքել Սիւնեցին վիպական ու քնարական տարրերի միահիւսմամբ բացայայտում է կերպարների վարքագիծը ու նրանց հոգեբանութիւնը, հաստատելով աւետարանական այն ճշմարտութիւնը, ըստ որի մարդն ունի ազատ կամք, ուստի և ինքն է միայն իր կատարած արարքների պատասխանատուն։

«Ադամգիրք»-*ը ինքնատիպ մի ստեղծագործութիւն է՝ որոշակի գեղարուեստական արժէքով։ Այդ արժէքին վնասում են սակայն Ադամի և Եւայի մեղանչման վերաբերեալ բազմաթիւ մեկնութիւնները, աղճատելով պոեմի կառուցուածքի ամբողջականութիւնն ու միասնութիւնը։*

«Ադամգրքեր»-*ում հեղինակը նպատակ է դրել բանաստեղծօրէն պատմել Ս. Գրքի զրոյցը, ինչպէս նաեւ տաղաչափօրէն յօրինել հին մեկնութիւնները Ս. Գրքի զրոյցի մասին և յաւելել իր մեկնաբանութիւնները այլոց ասածներին։ Խօսքը* «մարդեղութեան խորհրդի» *մասին է, որով բացատրել են Ադամի և Եւայի զրոյցը։*

Առաքել Սիւնեցին ունի «Ադամգրքի» *չորրորդ հատոր եւս, որ կոչւում է* «Դրախտագիրք», *որն ունի 1060 տող և քսան ճառեր կամ գլուխներ։* «Հեղինակին նպատակն եղած է այս աշխարհի բնակիչներն իր հետ առնելով՝ փնտռելու ելնել այն անծանօթ քաղաքը՝

[15] **Առաքել Սիւնեցի,** Ադամգիրք, հր. Մկրտիչ Պոտուրեան, Վենետիկ, 1907, էջ 7-10:

ուսկից արտաքսուած էր Ադամ»[16]։

Ձեռագրի վրայ չկայ «Դրախտագիրք» *տիտղոսը։ Այդպէս են կոչել՝ ելնելով ընդհանուր բովանդակութիւնից, որի համար պարտական ենք Ղ. Ալիշանին։* «Դրախտագիրք»-*ը թուում է* «Ադամգրքի» *շարունակութիւնն է։ Եթէ առաջինում պատկերւում է նախածնողների դրախտից արտաքսումը, նրանց դառն զղջումն ու ապաշաւը, երկրորդում միջոցներ ու պայմաններ են առաջադրւում երկնաւոր դրախտը նուաճելու համար։*

Մարդու անկումը և վերստին իր կորուսեալ երջանկութեան հետամտելու թեման կայ հին ժողովուրդներից շատերի մօտ։ Դա միջնադարեան քրիստոնեայ աշխարհի ամենասիրելի նիւթերից մէկն էր։ Մեր կրօնական գրականութեան մէջ այդ ուղղութեամբ առանձնապէս աչքառու են նոյն բովանդակութեամբ «Հարցումն Լուսաւորչին և պատասխանք հրեշտակին», *և Վարդան Այգեկցու* «Վասն դժոխոց և անքուն որդոց» *գրութիւնները։*

«Դրախտագիրք»-*ը հետաքրքիր է իր գեղարուեստական մտայղացմամբ։ Այն հանդերձեալ կեանքի նկարագրութիւնն է՝ դրախտային և դժոխային երկու վիճակներով, ուր մարդկանց վիճակուած է ապրել համապատասխան իրենց վարած կեանքի՝ սահմանելով ուրախութիւն և փառք անմեղներին և յաւիտենական տանջանք՝ մեղաւորների համար։ Պոեմի գլխաւոր հերոսը ինքը՝ հեղինակն է, որը Վիրգիլիոսի նման, Տանթէի* «Աստուածային կատակերգութիւն» *երկում, ուղեկցում է ընթերցողին դէպի անդրշիրիմեան աշխարհ, ուր մեղքի մէջ ընկղմուած մեռեալ հոգիները խորհուրդ են տալիս կենդանի մարդկանց ապրել ազնիւ ու պարկեշտ՝ արժանանալու համար յաւիտենական արքայութեանը։*

«Դրախտագիրք»-*ը* «Ադամգիրք» *Բ.-ի պէս նոյնայանգ է, ուստի ձանձրալի են անընդհատ կրկնուող* -եզ *կամ* -ես *յանգերը։ Ճիշդ է, գրքում կան գեղեցիկ պատկերներ, բայց աւելի ընդարձակ տեղ են զբաղեցնում ձանձրալի հատուածներն ու կրկնութիւնները։ Լեզուն, ի տարբերութիւն* «Ադամգրքի», *աւելի մօտ է աշխարհաբարին։*

Առաքել Սիւնեցին ունի նաեւ այնպիսի տաղեր ու գանձեր հանդերձեալ աշխարհի և վերջին դատաստանի մասին, որոնք այս կամ այն չափով շօշափւում կամ նոյնիսկ կրկնւում են նրա «Ադամգիրք» *և* «Դրախտագիրք» *պոեմներում։ Իր բարոյախօսական տաղերում նա խրատներ է տալիս քահանաներին ու ձաղկում նրանց վարքագիծը (*«Խրատք երիցկնոջ և քահանայից», «Դարձեալ վասն կուսակրօն քահանայից» *և այլն)։ Որոշ տաղերում էլ մարդկանց բաժանում է վատ ու լաւ խմբերի և բնորոշում նրանց վարքն ու ժամանակի բարքերը (*«Տաղք վասն յատկութեան զանազան բարուց մարդկանց»*)։ Նա նշում է 370 չարիք (շողոքորթութիւն, կաշառակերութիւն, կեղծիք, հաւատի պակաս և այլն), որոնց հեղինակ է համարում չար ոգիներին։*

Որպէս կրօնական բովանդակութիւն ունեցող գրականութիւն, Սիւնեցու բանաստեղծութիւնները կարդացւում են հեշտութեամբ։ Սրանք ունեն թեթեւ չափ և թարմ տաղաչափական ձեւեր։ Նա յօրինել է զանազան չափերով՝ անապեստեան[17] բազմավանկ բանաստեղծութիւններից մինչեւ հայրէնի կարճ չափերը։

Նրա ստեղծագործական ժառանգութեան մէջ ակնյայտ են գուսանական երգերի ազդեցութիւնը, չափազանցութիւնները, նոր պատկերներն ու հարուստ բառապաշարը։ Սիւնեցին օգտագործել է նաեւ ծայրակապեր՝ յօդելով անուններ և նոյնիսկ նախադասութիւններ։

---

[16] «Բազմավէպ», Վենետիկ, 1913, մարտ, էջ 99, Մ. Պոտուրեան, Մատենագրութիւնք Առաքել Սիւնեցւոյ յօդուածի մէջ։

[17] Հին յունա-հռոմէական տաղաչափութեան մէջ՝ եռավանկ անդամ, որի առաջին երկու վանկերը կարճ են, երկրորդը՝ երկար, անապեստ։

ՏՐՅ. Յ. ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԱՌԱՔԵԼ ՍԻՒՆԵՑԻՆ ԵՒ ՆՐԱ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Ամփոփում

XV դարի սկզբի նշանաւոր փիլիսոփայ, բանաստեղծ, մանկավարժ, մատենագիր, հոգեւոր և հասարակական գործիչ Առաքել Սիւնեցին Տաթեւի դպրոցի վերջին մեծ ներկայացուցիչն է, ով հայ գրականութեան մէջ իր ուրոյն տեղն է գրաւում քնարական և խրատական քերթուածքներով, պոեմներով ու ներբողեաններով։ Նրա «Ադամգիրք»*-ը, տաղերը, ինչպէս նաեւ արձակ գրուածքները իբրեւ ներշնչման աղբիւր ունեցել են աստուածաշնչական, խրատական նիւթեր։ Բացառութիւն են կազմում մի քանի կարճ տաղեր, որոնք ունեն աստղագիտական աւանդութիւնների տաղաչափութիւն։ Իր գործերում նկատւում են տարրերի բազմազանութիւն, բարդութիւն, այլազանութիւն, որտեղ իրար են խառնւում աստուածաբանը, քարոզիչը, բարոյախօսը, քնարերգակը, դիւցազներգակը, աղօթողն ու աշուղը։ Որպէս կրօնական բովանդակութիւն ունեցող գրականութիւն, Սիւնեցու բանաստեղծութիւններն ունեն թեթեւ չափ և թարմ տաղաչափական ձեւեր։*

DC. H. PETROSYAN

ARAKEL SYUNETSI AND HIS LITERARY HERITAGE

Summary

Arakel Syunetsi, an early 15th-century well-known philosopher, poet, pedagogue, author, religious and public figure is the last outstanding representative of the Tatev school and has a special place in the Armenian literature with his admonitive writings, poems and odes. His "Adamgirq" (trnsl. "Adam's book"), most of his verses and prose works are influenced by the Bible and preachments, with the exception of several short verses which are written in traditional astrological metre. His works are characterized by a variety and complexity of elements where the theologian, preacher, moralist, lyric poet, epic poet, prayer, ashug (troubadour) are all joined. As religious literature, Syunetsi's poems are characterized by light metre and fresh